



ԵՊՀ պրոռեկտոր  
Է. ԱՍՐԻՅԱՆ

01.07.2022

**ԿԱՐԾԻՔ**

Աննա Երեմի Երկանյանի «Գևորգ Դերիկյանի ստեղծագործությունը» թեմայով Ժ.01.02 («Նորագույն շրջանի հայ գրականություն») մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին: (Ընդունված է ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի 2022 թ. հուլիսի 1-ին տեղի ունեցած նիստում, արձանագրություն թիվ 8)

Ելույթ ունեցան պրոֆ. Վ. Գաբրիելյանը, դոց.դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Արզումանյանը, Լ. Սեյրանյանը:

Նշվեց, որ Աննա Երեմի Երկանյանի «Գևորգ Դերիկյանի ստեղծագործությունը» թեմայով աշխատանքը կատարվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում: Պաշտպանությունը կայանալու է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում: Խորհուրդը այն կարծիքի է ուղարկել ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոն՝ որպես առաջատար կազմակերպության:

Նշվեց, որ ներածությունից, «Գևորգ Դերիկյանի անիականը», «Հայոց պատմության անցումային շրջանին նվիրված ստեղծագործությունները», «Գևորգ Դերիկյանի փոքր արձակը» վերնագրերով երեք գլուխներից, եզրակացություններից և գրականության ցանկից բաղկացած «Գևորգ Դերիկյանի ստեղծագործությունը» ատենախոսությունը թեմայի հետազոտման հաջողված նմուշ է:

Ներածության մեջ շեշտադրվել են ուսումնասիրության առարկան, հարցի պատմությունն ու մշակվածության աստիճանը, հիմնավորվել են աշխատանքի

կառուցվածքը, գիտական նորույթը, մեթոդական հիմքերը, ներկայացվել են գրողի կյանքն ու գրական ուղին:

Առաջին գլխում՝ «Գևորգ Դերիկյանի անիականը», հանգամանորեն ներկայացվում են «Տրդատ ճարտարապետ» և «Գոյամարտ» պատմավեպերը, որոնք համապատասխանաբար բնորոշվում են իբրև պատմակենսագրական վեպ և վեպ-ժամանակագրություն: Այդ գործերն արժևորվում են ոչ միայն 1960-80-ական թվականներին գրված, պատմական թեման արծարծող ազգային գեղարվեստական որոշ իրագործումների, այլև, առհասարակ, պատմական արձակի և պատմավեպի՝ ազգային գրական ավանդույթի համաձիթում: Ըստ հեղինակի՝ Գ. Դերիկյանը, շարունակելով դասական պատմավեպի ավանդները, հասնում է թարմաշունչ ձևակերտումների:

Ատենախոսը, հիմնվելով Գ. Դերիկյանի պատմահայեցողության՝ գրականագիտական դաշտում հնչած հետաքրքիր գնահատումների վրա, ինքնատիպ դիտարկումներով ամբողջացրել է պատմավեպերում արծարծված գաղափարական հարցադրումները, կերպարակերտման արվեստի ինքնատիպությունը: Երկանյանը ընդգծել է պատմականի և գեղարվեստականի դերիկյանական յուրօրինակ զուգահեռումները՝ անդրադառնալով նաև Գ. Դերիկյանի օգտագործած պատմական սկզբնաղբյուրներին և դրանց վերլուծությանը:

Ատենախոսը իրավացիորեն նկատում է, որ «Տրդատ ճարտարապետ» պատմավեպում մեծ տեղ է հատկացված Անիին և ընդհանրապես ճարտարապետական հոյակերտ կոթողներին, որն էլ պայմանավորում է կառուցողական արվեստի գեղարվեստական պատկերման, հայկական ճարտարապետության տարբեր հարցերի դերիկյանական մեկնաբանությունների և վերլուծությունների արժևորումը:

Անիին նվիրված Գ. Դերիկյանի երկու պատմավեպերի քննությանը զուգահեռ վերլուծվել են նաև նախորդ շրջանի թե՛ հայ հեղինակների ստեղծագործությունները և թե՛ եվրոպացի ուղեգիրների երկերի՝ Անիին վերաբերող հատվածները:

Երկրորդ գլուխը («Հայոց պատմության անցումային շրջանին նվիրված ստեղծագործությունները») նվիրված է Գ. Դերիկյանի «Վիրավոր կռունկ» վեպին և «Սրբացած հուշարձան» աշխատությանը: Այս գլխի բանասիրական հետազոտության

գաղափարական առանցքը նշված գործերում արծարծված խնդիրների քննությունն է՝ պանդխտության մոտիվի և ազգապահպանման հրամայականի շեշտադրումով:

Ատենախոսը իրավացիորեն նկատում է, որ պանդխտության թեման պայմանավորում է վեպի ուղեգրական բնույթը, որը տեսանելի է դարձնում ժամանակի ողջ հայ իրականությունը և միջավայրը՝ բուն երկրից մինչև հայկական գաղթավայրերը: Երկանյանը հետաքրքիր դիտարկումներով քննում է կռունկի խորհրդանշական կերպարի դերիկյանական մոտեցումներն ու ընկալումները, ինչպես նաև օտար ափերում տառապանքի և ինքնության փնտրտուքի մեջ գտնվող պանդուխտ հայի՝ Արթինի ընդհանրական կերպարը:

Երկրորդ գլխում ատենախոսն անդրադարձել է նաև «Սրբացած հուշարձան» աշխատությանը, ներկայացրել վերջինիս պատմագեղարվեստական արժեքը՝ կարևորելով պատմական փաստերի գեղարվեստական վերապատկերումը, պատմական միջավայրի ստեղծումը՝ հազեցած ժամանակի ազգագրական, հավատալիքային և բանահյուսական ստեղծագործությունների վերարտադրությամբ:

«Գևորգ Դերիկյանի փոքր արձակը» վերնագրված երրորդ գլխում քննվել են Գ. Դերիկյանի փոքր կտավի գործերը՝ պատմվածքները: Դերիկյանական փոքր արձակի պատմական անդրադարձների ուսումնասիրությանը հաջորդում է միջնադարյան գրիչ-ծաղկողների գործունեության պատմագեղարվեստական նկարագրի հետազոտությունը, որը հատկանշվում է մանրաշխատ գուգահեռումներով և խաչաձևումներով: Մեթոդաբանական հետաքրքիր մոտեցումներով վերլուծվել են միջնադարյան վկայությունների հիման վրա գրված մի շարք պատմվածքներ, ինչպես նաև արդի խնդիրներ՝ արծարծող և վկայաբանությունների, միջնադարյան հին ու նոր շրջանների սուրբգրային պատմությունների հիման վրա գրված պատմվածքները:

«Միջնադարյան գրիչ-ծաղկողները Գևորգ Դերիկյանի ստեղծագործություններում» ենթագլխում ատենախոսը փորձել է ներկայացնել գրիչ-ծաղկողների գեղարվեստական կերպավորումը ինչպես պատմվածքներում, այնպես էլ պատմավեպերում և հրապարակախոսական երկերում՝ ընդգծելով դերիկյանական գեղագիտական համակարգի առանձնահատկությունները, պատկերակերտման արվեստի ինքնատիպությունը:

Աշխատանքի վերջում համակարգվել են հետազոտության արդյունքում կատարված հետաքրքիր եզրահանգումները:

Ատենախոսության նշանակությունը մեծապես պայմանավորված է փաստական հարուստ նյութի ընդգրկման, պատմական սկզբնաղբյուրների խոր իմացության, արդիականության լույսով պատմական անցյալի վերաիմաստավորման, հեղինակի գրամշակութային գործունեության համակարգային արժևորման առանձնահատկությամբ: Ատենախոսության հեղինակի բնորոշմամբ՝ այժմեական խնդիրների արծարծմամբ հանդերձ Դերիկյանի ստեղծագործության «գլխավոր անկյունաքարը հայոց միջնադարի խորունկ և խորհրդավոր աշխարհն է, որը Գևորգ Դերիկյանի համար դառնում է ինքնաարտահայտման յուրօրինակ ձև» (էջ 13):

Երկանյանը առանձնահատուկ ուշադրությամբ է անդրադառնում բանահյուսական-ազգագրական համատեքստի, վկայաբանական և սուրբգրային պատմությունների դերիկյանական գեղարվեստական և հրապարակախոսական մեկնաբանություններին, պատմության երկաստիճան դիտարկմանը: Գ. Դերիկյանի գրական վաստակը բնութագրվում է որպես ճանաչողական նշանակություն, քննաբանված երեք վեպերի դեպքում՝ ուղեգրական նկարագիր ունեցող դիդակտիկ-ուսուցողական գրականություն, որի առանցքում հայրենականի, անցյալի հոգևոր արժեքների գնահատման և պահպանման, ազգային անկախ պետականության կարևորման, ազատությունը զենքով նվաճելու պատգամն է:

Ցավոք, աշխատանքում առկա են նաև թերություններ, ոչ այնքան հաջող լուծումներ, որոնց առնչությամբ պետք է անել հետևյալ դիտողությունները.

1. Ատենախոսը, որոշադրելով ուսումնասիրության գլխավոր միտումը, նշում է, որ այն եղել է հեղինակին որպես հետազոտողի և ստեղծագործողի ներկայացնելը, այդ պատճառով անդրադարձ չի եղել Գ. Դերիկյանի գեղարվեստական ստեղծագործությունների պատկերավորման համակարգին, լեզվին և ոճին: Ատենախոսը նաև նշում է. «Գ. Դերիկյանին որպես ստեղծագործող ներկայացնելը օգնում է վերհանելու նրա ստեղծագործական անցած ճանապարհն ու մեթոդը, գրական երկի կերպարակերտման ու պատկերակերտման միջոցները: Թեկնածուական սույն ատենախոսության

զլիսավոր նպատակն է եղել ներկայացնել Գևորգ Դերիկյանի ստեղծագործությունը, բացահայտել արձակի առանձնահատկությունները, ցույց տալ վերջինիս ստեղծագործությունների գիտագեղարվեստական փոխկապվածությունը և փոխլրացումը» (էջ 19):

- Այս առնչությամբ նախ պետք է նշել, որ Դերիկյանի երկերի լեզվաոճական նկարագրի առանձին քննաբանումներ և դիտարկումներ աշխատանքում կան: Ատենախոսն անդրադառնում է նաև գրողի կերպարային համակարգին և պատկերային առանձին լուծումների, որոնց շարքում հիշատակելի են վիրավոր կռունկ-պանդուխտ հայ, լեռ-ձգտումների բարձրակետ զուգահեռները, ազգային երգը և միջնադարյան բանաստեղծությունը որպես յուրօրինակ կերպարներ և վեպի ընթացքը առաջ մղող միջոցներ դիտարկելը: Եթե ատենախոսը նպատակ է ունեցել բացահայտելու Դերիկյանի արձակի առանձնահատկությունները, հարկ էր, այնուամենայնիվ, առավել հիմնավոր անդրադառնալ պատկերային համակարգին. չէ՞ որ հեղինակին որպես ստեղծագործողի ներկայացնելը չի ենթադրում միայն գաղափարական ըմբռնումների և թեմատիկ ընդգրկման քննություն: Ստեղծագործողի նկարագիրն ամբողջանում է նաև պատկերակերտման համակարգի ուսումնասիրման շնորհիվ: Թեմաները կարող են ընդհանրություններ դրսևորել, սակայն ստեղծագործողի ինքնությունը պայմանավորում է դրանց արձարձման կերպը, և պատկերային համակարգի խորքային ու ծավալային քննությունը, անշուշտ, դրա հնարավորությունը կտար:
2. Աշխատանքում քիչ տեղ է հատկացված հայ և համաշխարհային պատմավեպի պատմությանը . և տեսությանը: Օգտագործված չեն անգամ հայ գրականագիտության սակավաթիվ ձեռքբերումները, մասնավորապես՝ Զավեն Ավետիսյանի «Հայ պատմավեպի պոետիկան» (Եր., 1986) մենագրությունը: Նման աշխատությունների, ինչպես նաև դրանց հիմք հանդիսացած հայ, ռուս և եվրոպական պատմավեպերի քննությունը կնպաստեր, որ Գ. Դերիկյանի պատմավեպերը դիտարկվեին վերջին երկու դարերի հայ պատմավեպի տիպաբանության շրջանակներում, նրա ժանրային, կառուցվածքային և ոճական զարգացումների ժառանգորդական շղթայում: Առհասարակ պատմատեսական գրականության օգտագործումը հնարավորություն կտար ավելի խորացնելու

վերլուծությունները, ինչպես նաև համեմատական եղանակով անդրադառնալու Գ. Դերիկյանի գործերի թերություններին, որոնց մասին գրեթե չի խոսվում ատենախոսության մեջ:

3. Կարելի էր ընդլայնել Գ. Դերիկյանի՝ քննության առարկա դարձած երկերի և 1960-80-ական թվականներին գրված, պատմական թեման արծարծող հիշատակված մյուս ազգային գեղարվեստական նմուշների գուգադրական քննության շրջածիրը՝ շեշտադրելով ոչ միայն գաղափարական համատեքստի ըմբռնման, այլև պատկերային լուծումների հնարավոր առնչությունների ուսումնասիրությունը:

Երկանյանը Գ. Դերիկյանի ստեղծագործության արժևորումը կատարում է գրականության մեջ նույն թեմայի անդրադարձներին գուգահեռ, սակայն համեմատական-վերլուծական միտքը երբեմն խոր վերլուծությունների չի հասնում: Օրինակ՝ նշվում է Խ. Դաշտենցի հետ ունեցած պատկերային ընդհանրությունների մասին, սակայն խոսքը սահմանափակվում է միայն երևույթի արձանագրումով: Կարելի էր ավելի հանգամանորեն անդրադառնալ Դ. Դեմիրճյան- Վ. Խեչումյան- Գ. Դերիկյան առնչություններին :

4. Աշխատանքում կան հղումների հետ կապված որոշակի անհարթություններ: Բավականին շատ բնագրային հղումները ծանրաբեռնում են շարադրանքը, կան էջեր, որտեղ տողատակում 3-4 հղումներ են տրված նույն գրքին: Բնագրային հղումները կարելի էր կատարել՝ մեջբերման ավարտին անմիջապես էջը նշելով:
5. Ընդհանուր առմամբ լեզվական վրիպակներից գերծ աշխատանքում տեղ է գտել մի ցավալի թյուրիմացություն. «պապ-պապի» համապատասխան հոլովածներ երկու անգամ գրված է «պապու» տարբերակով:

Սակայն արված դիտողությունները և դիտարկումները չեն ստվերում ուսումնասիրության արժանիքները: Այն բանասիրական հարուստ, քննախույզ և մանրակրկիտ հետազոտության նմուշ է: Պաշտպանության է ներկայացված գնահատման արժանի գրողի մասին ցարդ գրված առավել ծավալուն և ամբողջական մի ուսումնասիրություն, որ ընդհանրության մեջ գնահատելի ատենախոսություն է:

ՈՐՈՇԵՑԻՆ – Աննա Երեմի Երկանյանի «Գևորգ Դերիկյանի ստեղծագործությունը»  
ուսումնասիրությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը  
ներկայացվող պահանջները, ուստի այն կարելի է երաշխավորել հրապարակային  
պաշտպանության:

Հայ նորագույն գրականության

ամբիոնի վարիչ՝

Նիստի քարտուղար՝



Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ամբիոնի վարիչի ստորագրությունը

հաստատում էմ՝



ԵՊՀ գիտքարտուղար Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ